29.նոյեմբեր 2023թ.

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

<<Արմավիրի հ.8 հիմնական դպրոց >>

ՊՈԱԿ-ի տնօրեն Աննա Խաչատրյանից

<<Հայկազնունք>> ՍՊԸ -ի տնօրեն

Կ.Մացակյանին

Հարգելի Կ.Մացակյան

<<Արմավիրի հ.8 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի (այսուհետ Գնորդ) և <<Հայկազնունք>> ՍՊԸ -ի (այսուհետ Վաճառող) 23 օգոստոսի 2023թ. կնքված N <<ԱԹՀԴ/ԱՊՁԲ/ԳՀ/2023/2.8>> ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ Պայմանագիր) շրջանակներում Վաճառողը ստանձնել է պարտավորություն մատակարարել Պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված ապրանքը, սակայն Վաճառողը չի կատարել Պայմանագրի 2.1.1 կետը՝ մատակարարման ժամկետները խախտվել են _1_ օրից ավելի:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնած պարտավորություններ չկատարելու հիմքով <<Արմավիրի հ.8 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ը հարկադրված է միակողմանի լուծել պայմանագիրը՝ 29 նոյեմբերի 2023թ-ից: Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 04.05.2017 թ. թիվ 526 Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Միաժամանակ հայտնում ենք, որ Վաճառողին տրվում է 10 աշխատանքային օր՝ որակավորման և պայմանագրի ապահովումները՝ համապատասխանաբար 61583(վաթսունմեկ հազար հինգ հարյուր ութսուներեք) ՀՀ դրամի և 41055(քառասունմեկ հազար հիսունհինգ) ՀՀ դրամի չափով վճարելու համար:

Փոխանցումը անհրաժեշտ է կատարել Գնորդի բանկային հաշվին (ՀՀ Ֆինանսների նախարարություն, Հ/Հ 900338000392):

Սահմանված ժամկետում փոխանցումը չկատարելու դեպքում պարտավորվում ենք որոշում կայացնել <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6/ա-րդ կետի համաձայն <<Հայկազնունք>> ՍՊԸ –ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

<<Արմավիրի հ.8 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի տնօրեն՝ Ա.Խաչատրյան